



ՀՀ ԱՆ ՉԻԱՀ-ի կանխարգելման  
հանրապետական կենտրոն

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

ՄԻԱԿ ԿԱՐԱԿԻ

ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բժշկական կազմակերպություններում ՄԻԱՎ վարակի հայտնաբերմանն ուղղված հետազոտության եվ խորհրդատվության իրականացման ընթացակարգ .....	3
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար արյան նմուշառման, մշակման, պահպանման եվ տեղափոխման ընթացակարգ .....	11
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների իրականացման ընթացակարգ .....	19
Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության եվ խորհրդատվության տրամադրման ընթացակարգ .....	30

# **ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Սույն գործունեության ընթացակարգի նպատակն է արդյունավետ դարձնել բժշկական կազմակերպություններում բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության տրամադրումը: Բուժաշխատողների նախաձեռնությամբ իրականացվող ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության հիմնական նպատակն է օգնել բուժաշխատողին՝ կայացնելու կլինիկական որոշում և/կամ նշանակելու այս կամ այն բժշկական միջամտությունը, որի համար անհրաժեշտ է իմանալ ՄԻԱՎ-ի նկատմամբ պացիենտի կարգավիճակը: Այն ուղղված է նաև բժշկական կազմակերպություններ դիմած մարդկանց շրջանում ՄԻԱՎ վարակի անախտանիշ դեպքերի բացահայտմանը:

## **1. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության տրամադրման ցուցումներ**

Անհրաժեշտ է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն առաջարկել՝

- 1) կլինիկական ցուցումներ ունեցողներին,
- 2) բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչներին և նրանց զուգընկերներին (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք, տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ, ԲԿՀ-ներում գտնվողներ, միգրանտներ և նրանց զուգընկերներ),
- 3) բոլոր հղիներին,
- 4) տուբերկուլոզով կամ տուբերկուլոզի կասկածով պացիենտներին,
- 5) սեռավարակներ ունեցող պացիենտներին,

6) ՄԻԱՎ վարակով պացիենտների զուգընկերներին:

## **2. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության կլինիկական ցուցումներ**

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կլինիկական ցուցում են ՁԻԱՀ-ինդիկատորային հիվանդությունները, նաև այլ հիվանդություններ և վիճակներ:

### ***ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կլինիկական ցուցում համարվող ՁԻԱՀ-ինդիկատորային հիվանդություններն են՝***

- 1) արգանդի վզիկի քաղցկեղ,
- 2) ոչ Հոջկինյան լիմֆոմա,
- 3) Կապոշիի սարկոմա,
- 4) տուբերկուլոզ,
- 5) ատիպիկ միկոբակտերիոզ՝ դիսեմինացված (տարածուն) կամ արտաթոքային,
- 6) միկոբակտերիաների այլ կամ չդիֆերենցված տեսակներով հարուցված վարակ՝ դիսեմինացված (տարածուն) կամ արտաթոքային,
- 7) թոքաբորբ՝ կրկնվող (12 ամսվա ընթացքում 2 կամ ավելի անգամ),
- 8) սալմոնելային սեպտիցեմիա՝ կրկնվող,
- 9) ցիտոմեգալովիրուսային ռետինիտ,
- 10) ցիտոմեգալովիրուսով պայմանավորված այլ հիվանդություններ, (բացառությամբ լյարդի, փայծաղի, ավշային հանգույցների),
- 11) հասարակ հերպես վիրուսային վարակ, 1 ամսից ավել տևող խոց(եր), բրոնխիտ, թոքաբորբ,
- 12) հարաճող բազմօջախային լեյկոէնցեֆալոպաթիա,
- 13) գլխուղեղի տոքսոպլազմոզ,
- 14) կրիպտոսպորիդիոզային լուծ՝ ավելի քան 1 ամիս,
- 15) իզոսպորոզ՝ ավելի քան 1 ամիս,

- 16) ատիպիկ դիսեմինացված (տարածուն) լեյշմանիոզ,
- 17) պնևմոցիստային թոքաբորբ,
- 18) կանդիդոզային էզոֆագիտ,
- 19) կանդիդոզ շնչափողի, բրոնխների, թոքերի,
- 20) կրիպտոկոկոզ՝ արտաթոքային,
- 21) հիստոպլազմոզ՝ դիսեմինացված (տարածուն), արտաթոքային,
- 22) կոկցիդիոդոմիկոզ՝ դիսեմինացված (տարածուն), արտաթոքային,
- 23) պենիցիլիոզ՝ դիսեմինացված (տարածուն):

***ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կլինիկական ցուցում համարվող այլ հիվանդություններն ու վիճակներն են՝***

- 1) սեռավարակներ,
- 2) վիրուսային հեպատիտ F կամ S (սուր կամ քրոնիկ),
- 3) չարորակ լիմֆոմա,
- 4) ուղիղ աղիքի քաղցկեղ կամ դիսպլազիա,
- 5) արգանդի վզիկի դիսպլազիա,
- 6) գոտևորոզ որքին,
- 7) մոնոնուկլեոզանման հիվանդություն,
- 8) անբացատրելի լեյկոցիտոպենիա կամ թրոմբոցիտոպենիա՝ ավելի քան 4 շաբաթ,
- 9) սեբորեային դերմատիտ, էկզանթեմա,
- 10) ինվազիվ պնևմոկոկային հիվանդություն,
- 11) անբացատրելի տենդ,
- 12) կանդիդեմիա,
- 13) ընդերային լեյշմանիոզ,
- 14) թոքերի առաջնային քաղցկեղ,
- 15) լիմֆոցիտային մենինգիտ,
- 16) բերանի խոռոչի մազավոր լեյկոպլակիա,
- 17) ծանր կամ ատիպիկ փսորիազ,
- 18) Գիյեն-Բարեի համախտանիշ,
- 19) մոնոնևրիտ,

- 20) ենթակեղևային դեմենցիա,
- 21) տարածուն սկլերոզանման հիվանդություն,
- 22) ծայրամասային նեյրոպաթիա,
- 23) քաշի անբացատրելի կորուստ,
- 24) անբացատրելի լիմֆադենոպաթիա,
- 25) օրալ կանդիդոզ,
- 26) անբացատրելի քրոնիկ լուծ,
- 27) երիկամների անբացատրելի քրոնիկ ախտահարում,
- 28) արտահիվանդանոցային թոքաբորբ,
- 29) կանդիդոզ,
- 30) գլխուղեղի առաջնային ծավալուն ուռուցք,
- 31) իդիոպաթիկ, թրոմբոցիտային թրոմբոցիտոպենիկ պուրպուրա,
- 32) ագրեսիվ իմունասուպրեսիվ բուժում պահանջող վիճակներ՝ քաղցկեղ, փոխպատվաստում, աուտոիմուն հիվանդություններ, որոնք պահանջում են իմունասուպրեսիվ բուժում,
- 33) զարգացման արատներով նորածիններ,
- 34) ներարգանդային տոքսոպլազմային վարակ,
- 35) լիստերիոզ,
- 36) ածի դանդաղումով կամ սնուցման խանգարումներով երեխաներ՝ համապատասխան բուժման անարդյունավետության դեպքում,
- 37) հարկանջային թքագեղձերի անբացատրելի ձգձգվող (պերսիստենտային) մեծացում,
- 38) բազմակի միաձուլվող կոնդիլոմաներ,
- 39) անախտանիշ լիմֆոիդ ինտերստիցիալ թոքաբորբ:

### **3. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության տրամադրում**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունը և խորհրդատվությունը երեք հաջորդական փուլից բաղկացած գործընթաց է: Այդ փուլերն են՝

- 1) նախաթեստային խորհրդատվություն,
- 2) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն,
- 3) հետթեստային խորհրդատվություն:

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ նախաթեստային և հետթեստային խորհրդատվությունը տրամադրվում են համաձայն «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման» կլինիկական ուղեցույցի:

### **4. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ լաբորատոր հետազոտության կազմակերպում**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների համար արյան նմուշառումը, պահպանումը և տեղափոխումը հետազոտություն կատարող լաբորատորիա կազմակերպվում են համաձայն «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման» կլինիկական ուղեցույցի և ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության համար արյան նմուշառման, մշակման, պահպանման և տեղափոխման ընթացակարգի:

### **5. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների իրականացում**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններն իրականացվում են համաձայն «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման» կլինիկական ուղեցույցի և ՄԻԱՎ վարակի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների իրականացման ընթացակարգի:



ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների տարբեր մեթոդների կիրառումը կախված է լաբորատորիաների հագեցվածությունից, աշխատանքային պայմաններից և անձնակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակից:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններն իրականացվում են օգտագործվող թեստերի հրահանգների և գործողությունների ստանդարտ ընթացակարգերի համաձայն:

Հաստատող հետազոտությամբ ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշում կատարվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող այլ լաբորատորիաներ իրականացնում են միայն ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտություններ:

## **6. Փաստաթղթավարություն**

Կատարել պատշաճ գրանցումներ կատարված հետազոտությունների վերաբերյալ, լիարժեք լրացնել ուղեգրի ձևը, ժամանակին ներկայացնել հաշվետվություն:

## **7. Հապավումներ**

ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն

## **Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ**

1. Ս.Գրիգորյան՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, ք.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի «ՄԻԱՎ վարակ» դասընթացի գիտական ղեկավար

2. Ա.Բազարջյան՝ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ.
3. Լ.Ավետիսյան՝ ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ, ք.գ.թ.

### **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

### **Շնորհակալական խոսք**

1. Ա.Պապոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ
2. Վ.Արզաքանյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
3. Է.Հովհաննիսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ

## Գրականության ցանկ՝

1. ՄԻԱԿ վարակի վերաբերյալ հետազոտության եվ խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման կլինիկական ուղեցույց, ՀՀ ԱՆ 04.08.17թ. N 2412-Ա հրաման:
2. Consolidated guidelines on HIV testing services. World Health Organization; 2015.
3. Consolidated guidelines on HIV diagnosis, prevention and treatment among key populations. World Health Organization; 2014.
4. Systematic screening for active tuberculosis: principles and recommendations. World Health Organization; 2013.
5. Guidance on couples HIV testing and counselling including antiretroviral therapy for treatment and prevention in serodiscordant couples: recommendations for a public health approach. World Health Organization; 2012.
6. HIV indicator conditions: guidance for implementing HIV testing in adults in health care settings. Copenhagen: HIV in Europe; 2012.
7. Guidance on provider-initiated HIV testing and counselling in health facilities. World Health Organization; 2007.
8. Guidelines for the management of sexually transmitted infections. World Health Organization; 2004.

# **ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Սույն ընթացակարգի նպատակն է արդյունավետ կազմակերպել բժշկական կազմակերպություններում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կազմակերպումը՝ արյան նմուշառումը, մշակումը, պահպանումը և տեղափոխումը ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիա:

Բժշկական կազմակերպություններում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը կազմակերպելիս պետք է առաջնորդվել գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերով:

## **1. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության համար արյան նմուշառում, պահպանում և տեղափոխում**

- 1) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար անհրաժեշտ է 3-5մլ արյուն: Վերցված ամբողջական արյունը մինչև լաբորատորիա ուղարկելը կարելի է պահել սենյակային ջերմաստիճանում ( $+18^{\circ}\text{C}$  -  $+25^{\circ}\text{C}$ ) մինչև 12 ժամ, սառնարանում՝  $+4^{\circ}\text{C}$  -  $+8^{\circ}\text{C}$ -ի պայմաններում 1 օր: Անջատված շիճուկը կարող է պահվել  $+4^{\circ}\text{C}$  -  $+8^{\circ}\text{C}$ -ի պայմաններում առավելագույնը 5 օր: Նշված ժամանակից ավել պահելու անհրաժեշտության դեպքում շիճուկը պետք է պահվի սառցախցիկում ( $-18^{\circ}\text{C}$  - « $\rightarrow$ » $20^{\circ}\text{C}$ ):
- 2) Որոշ արագ թեստերով հետազոտությունների համար հնարավոր է օգտագործել մատից վերցված արյուն, որը պահպանման ենթակա չէ:
- 3) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար հավաքագրված արյան փորձանմուշները ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիա պետք է տեղափոխվեն պահպանման պայմաններից բխող ժամկետներում (առավելագույնը 7 օրվա ընթացքում):

- 4) ՀՀ մարզերի բժշկական կազմակերպություններում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար հավաքագրված արյան փորձանմուշների հետազոտությունն իրականացվում է տվյալ բժշկական կազմակերպության՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիայում (այդպիսի լաբորատորիայի առկայության դեպքում) կամ տվյալ մարզի տարածքում գործող ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող հենակետային լաբորատորիաներում (ցանկը ստորև): Երևանին մոտ բնակավայրերի բժշկական կազմակերպությունները կարող են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար հավաքագրված արյան փորձանմուշներն ուղարկել նաև ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ վերջինիս հետ նախապես համաձայնեցնելով դա:
- 5) Երևանի տարածքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար հավաքագրված արյան փորձանմուշների հետազոտությունն իրականացվում է տվյալ բժշկական կազմակերպության՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիայում (այդպիսի լաբորատորիայի առկայության դեպքում) կամ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում:
- 6) ՀՀ մարզերում տեղակայված ՔԿՀ-ներում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության համար հավաքագրված արյան փորձանմուշների հետազոտությունն իրականացվում է կա՛մ ՔԿՀ-ում, կա՛մ տվյալ մարզի տարածքում գործող ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն կատարող հենակետային լաբորատորիաներում, կա՛մ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում:
- 7) Երևանում տեղակայված ՔԿՀ-ներում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության համար հավաքագրված արյան փորձանմուշների հետազոտությունն իրականացվում է կա՛մ ՔԿՀ-ում, կա՛մ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում:
- 8) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիա արյան փորձանմուշների տեղափոխման գործըն-

թացը կազմակերպում և վերահսկում է այն հիմնարկի ղեկավարը, որտեղ արյուն է հանձնել այցելուն:

- 9) Արյան կամ շիճուկի փորձանմուշները տեղափոխվում են վակուումային կամ միկրոցենտրիֆուգային փորձանոթներով՝ եռաշերտ փաթեթավորմամբ: Փորձանոթները (առաջին շերտ) տեղադրվում են ջրանթափանց հերմետիկ բեռնարկղի մեջ (երկրորդ շերտ), որը տեղադրվում է սառնարան-պայուսակի մեջ (երրորդ շերտ) և տեղափոխվում՝ պահպանելով պահանջվող ջերմային ռեժիմը (+4°C - +8°C): Արգելվում է փորձանմուշների համար լրացված ուղեգրերը դնել տեղափոխման համար նախատեսված տարողությունների մեջ:

## ՑԱՆԿ

ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն  
իրականացնող հենակետային լաբորատորիաներ ունեցող  
բժշկական կազմակերպությունների

<b>Մարզ</b>		<b>Բժշկական կազմակերպություն</b>
1	Շիրակ	«Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
2	Արմավիր	«Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
3	Արարատ	«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ
4	Սյունիք	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
5	Սյունիք	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
6	Վայոց Ձոր	«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
7	Կոտայք	«Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ
8	Լոռի	«Լոռու մարզային փոխներարկման կայան» ՓԲԸ
9	Լոռի	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
10	Տավուշ	«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
11	Տավուշ	«Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
12	Արագածոտն	«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ
13	Գեղարքունիք	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ
14	Գեղարքունիք	«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ
15	Երևան	«ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

## 2. Փաստաթղթավարություն

1. Կատարել պատշաճ գրանցումներ կատարված հետազոտությունների վերաբերյալ, լիարժեք լրացնել ուղեգրի ձևը, ժամանակին ներկայացնել հաշվետվություն:
2. Եթե հետազոտությունը կատարվելու է այն բժշկական կազմակերպությունում, որտեղ վերցվել է արյան նմուշը, կարելի է օգտագործել սվյալ բժշկական պությունում կիրառվող ուղեգրի ձևը: Ուղեգիրը պետք է պարունակի տեղեկություններ սեռի, տարիքի, բնակավայրի, ծածկագրի վերաբերյալ համապատասխան «Մարդու իմունային անբավարարության վիրուսի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վիճակագրական հաշվետվության ձև 88-ի:
3. Եթե հետազոտությունը կատարվելու է այլ բժշկական կազմակերպությունում, արյունը լաբորատորիա է ուղարկվում համապատասխան ուղեգրով (ներկայացված է ստորև), որը լրացվում է բժշկի կողմից 2 օրինակից:
4. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաները իրականացրած հետազոտությունների վերաբերյալ պետք է ներկայացնեն հաշվետվություններ՝ համաձայն «Մարդու իմունային անբավարարության վիրուսի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վիճակագրական հաշվետվության ձև 88-ի:



Ուղեգիր հ. \_\_\_\_\_

ԱՐՅԱՆ ՄԵՋ ՄԻԱՎ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

արյուն/արյան շիճուկ ուղարկող բուժօգնականի անվանումը

Հերթական հ.	Քրանցման հ.	Անուն, ազգանուն, հայրանուն	Սեռ	Ծննդյան թիվ	Անձնագրի սերիա, համար	Հասցե	Կող	Արյուն վերցնելու օր	Կլինիկական ախտորոշում*	Հետազոտության պատասխան
-------------	-------------	----------------------------------	-----	----------------	-----------------------------	-------	-----	------------------------	---------------------------	---------------------------

16

\* Հղիների արյան ուղեգրման դեպքում սյունյակում անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե որերորդ հեղուկությունն է՝ «առաջնային, հղիության ժամկետ» և «կրկնակի, հղիության ժամկետ»:

Ուղեգրող բուժօգնականի տնօրեն՝ \_\_\_\_\_ /ազգանուն, անուն/ \_\_\_\_\_ /ստորագրություն/

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

### 3. Հապավումներ

ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՁԻԱՀ	ծեղքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն

### Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ

1. Ա.Ասատրյան՝ բժիշկ-լաբորանտ, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատոր ախտորոշման բաժնի վարիչ
2. Կ.Թեյմուրազյան՝ բժիշկ-լաբորանտ, ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի փոխտնօրեն
3. Մ.Յախշյան՝ բժիշկ-լաբորանտ, ՁԻԱՀ-ի ԿՀԿ

### Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

### Շնորհակալական խոսք

1. Ա.Պապոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ
2. Ժ.Պետրոսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կանխարգելման բաժնի վարիչ
3. Լ.Ավետիսյան՝ ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ, բ.գ.թ.

## Գրականության ցանկ

1. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման կլինիկական ուղեցույց, ՀՀ ԱՆ 04.08.17թ. N 2412-Ա հրաման:
2. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերպման չափորոշիչ, ՀՀ ԱՆ 27.12.14թ. N 76-Ն հրաման:
3. Կալանավորված անձանց և դատապարտյալների ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բուժաշխատողների կողմից նախաթեստային և հետթեստային խորհրդատվության ու հետազոտության իրականացման կարգ, ՀՀ կառավարության 10.07.13թ. N733-Ն որոշում:
4. Практическое руководство по биологической безопасности в лабораторных условиях.Третье Издание. Всемирная Организация Здравоохранения, 2004.
5. Consolidated guidelines on HIV testing services. World Health Organization; 2015.

## **ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Սույն ընթացակարգի նպատակն է արդյունավետ կազմակերպել հենակետային և ոչ հենակետային լաբորատորիաներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության գործընթացը:

ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշում կատարվում է հաստատող հետազոտությամբ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի ռեֆերենս լաբորատորիայում:


ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող այլ լաբորատորիաներ (հենակետային և ոչ հենակետային) իրականացնում են միայն ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտություններ: Հենակետային է դիտարկվում մարզի բժշկական կազմակերպության կառուցվածքում գործող լաբորատորիան, որտեղ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվում են ինչպես տվյալ բժշկական կազմակերպությունում հավաքագրված, այնպես էլ մարզի այլ բժշկական կազմակերպություններից ուղեգրված արյան փորձանմուշները:

Լաբորատորիաներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերին.

1. Հետազոտության համար փորձանմուշներն ընդունվում են համապատասխան ուղեգրի առկայության և լաբորատոր հետազոտության չափանիշներին փորձանմուշի համապատասխանելու դեպքում: Ընդունման չափանիշներին չհամապատասխանող փորձանմուշները չեն ընդունվում, ինչի վերաբերյալ կատարվում է գրառում համապատասխան մատյանում:
2. Լաբորատորիայում արյան փորձանմուշները պետք է հետազոտվեն մինչ լաբորատորիա ընդունվելը դրանց պահման և տեղափոխման պայմաններից բխող ժամկետներում, բայց ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում:

3. ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտությունների ռազմավարությունը ներկայացված է գծապատկեր 1-ում:

**Գծապատկեր 1.** ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտությունների ռազմավարություն



4. Ոչ հենակետային լաբորատորիաներում արյան փորձանմուշները հետազոտվում են մեկ տեսակի թեստով (A1): Բացասական արդյունքով նմուշը (A1-) համարվում է ՄԻԱՎ-ի նկատմամբ բացասական, հետազոտվածի կարգավիճակը՝ ՄԻԱՎ-բացասական: Դրական արդյունքով նմուշը (A1+) համարվում է ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական, ինչի հաստատման կամ ժխտման համար անհրաժեշտ են հետագա

հետազոտություններ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում (ստացված դրական արդյունքով նմուշը (A1+) տեղում կրկնակի չի հետազոտվում): Նման դեպքերում լաբորատորիայի մասնագետը հայտնում է դրական արդյունքի մասին ՁԻԱՀ-ի ԿՀԿ և դրական արդյունք ստացած անձին և դրական արդյունքով փորձանմուշը (եթե առկա է) ուղեգրում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ:

5. Հենակետային լաբորատորիաներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնելիս պետք է առաջնորդվել ըստ ընդունված ալգորիթմի (կոնկրետ թեստերի կիրառման հաջորդականություն), որը հաստատվում է տվյալ բժշկական կազմակերպության ղեկավարի կողմից:
6. Մարզային հենակետային լաբորատորիաներում արյան փորձանմուշները հետազոտվում են մեկ տեսակի թեստով (A1): Եթե լաբորատորիան ունի մեկից ավելի տեսակի թեստեր, ապա առաջին գծի համար ընտրվում է առավել զգայունություն ունեցողը (ցանկալի է IV սերնդի թեստը): Բացասական արդյունքով նմուշը (A1-) համարվում է ՄԻԱՎ-ի նկատմամբ բացասական, հետազոտվածի կարգավիճակը՝ ՄԻԱՎ-բացասական: Դրական արդյունքով նմուշը (A1+) մարզային հենակետային լաբորատորիաներում հետազոտվում է այլ թեստով (A2, եթե այն առկա է) կամ կրկնակի հետազոտվում է A1 թեստով: Երկրորդ հետազոտության արդյունքում՝
  - 1) «A1+, A2+», կամ «A1+, A1+» դեպքերում նմուշը համարվում է ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական, ինչի հաստատման կամ ժխտման համար անհրաժեշտ են հետագա հետազոտություններ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նման դեպքերում լաբորատորիայի մասնագետը հայտնում է դրական արդյունքի մասին ՁԻԱՀ-ի ԿՀԿ և դրական արդյունք ստացած անձին և դրական արդյունքով փորձանմուշը (եթե առկա է) ուղեգրում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ:

- 2) «A1+, A2-» կամ «A1+, A1-» դեպքերում հետազոտության արդյունքը համարվում է անորոշ, և անհրաժեշտ են հետագա հետազոտություններ: Նման դեպքերում լաբորատորիայի մասնագետը հայտնում է արդյունքի մասին ՁԻԱՀ-ի ԿՀԿ: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետը, հաշվի առնելով կիրառված թեստերի բնութագրիչները և այլ հանգամանքներ (համաճարակաբանական անամնեզ, կլինիկական վիճակ, հետազոտման ծածկագիր և այլն), առաջարկում է անմիջապես կրկնել հետազոտությունը արյան նոր նմուշով կամ հետազոտել 14 օր հետո տեղում կամ ուղեգրել անձին և նմուշը (եթե առկա է) ՁԻԱՀ-ի ԿՀԿ:
7. ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշումը կատարվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում՝ երկրում միակ ՄԻԱՎ-ի հաստատման ռեֆերենս լաբորատորիայում:

## ՑԱՆԿ

ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն  
իրականացնող հենակետային լաբորատորիաներ ունեցող  
բժշկական կազմակերպությունների

<b>Մարզ</b>		<b>Բժշկական կազմակերպություն</b>
1	Շիրակ	«Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
2	Արմավիր	«Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
3	Արարատ	«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ
4	Սյունիք	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
5	Սյունիք	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
6	Վայոց Ձոր	«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
7	Կոտայք	«Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ
8	Լոռի	«Լոռու մարզային փոխներարկման կայան» ՓԲԸ
9	Լոռի	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
10	Տավուշ	«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
11	Տավուշ	«Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
12	Արագածոտն	«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ
13	Գեղարքունիք	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ
14	Գեղարքունիք	«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ
15	Երևան	«ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ



## Փաստաթղթավարություն

- 1) Կատարել պատշաճ գրանցումներ կատարված հետազոտությունների վերաբերյալ, ժամանակին ներկայացնել հաշվետվություն:
- 2) Ընդունման չափանիշներին համապատասխանող փորձանմուշն ընդունվում և գրանցվում է կենսաբանական նմուշների ընդունման գրանցամատյանում (ձևը ներկայացված է ստորև):

### ԿԵՆՍԱՆՅՈՒԹԻ ԵՎ ՈՂԵԳՐԵՐԻ ԵՆԴՈՒՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Կ. թ.	Գրանցման օր	Գրանցման վերջնական օր	Ուղեգրող հիմնարկության անվանում	Վիճակ	Քանակ	Կենսանյութի և ուղեգրերի տեղափոխման պատասխանատուի ստորագրություն

- 3) Ընդունման չափանիշներին չհամապատասխանող փորձանմուշները չեն ընդունվում, ինչի վերաբերյալ կատարվում է գրառում կենսաբանական նմուշների մերժման և խոտանման գրանցամատյանում (ձևը ներկայացված է ստորև):

**ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ ԵՎ ԽՈՏԱՆՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

Հերթական հ.	Նմուշառման ամսաթիվ	Նմուշի կերթական հ.	Կենսանյութի մերժման ամսաթիվ	Կենսանյութի ընդունման ի վիճակում	Ուղեգրող հիմնարկության անվանում և հերթական հ.	Ծածկիչ	Մերժման պատճառ	Խոտանված կենսանյութի քանակ	Խոտանման պատճառ	Կենսանյութի և ուղեգրերի տեղափոխման պատասխանատուի ստորագրություն

- 4) Կատարված հետազոտությունների վերաբերյալ կատարվում են գրառումներ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների գրանցամատյանում (ծևը ներկայացված է ստորև):

**ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

Փորձանմուշի հ.հ.	Ուղեգրող կազմակերպություն	Փորձանմուշի վերցման օր	Ազգանուն Անուն Հայրանուն	Բնակության վայր	Ծածկագիր	Ծննդյան տարեթիվ	Սեռ	Հետազոտությունների արդյունքներ								Թեստ հավաքածուի անվանում և ՆԼՈՎ-ի արդյունք	Հետազոտություն իրականացնող Ա.Ա.
								I հՖԱ		II հՖԱ		III հՖԱ		Արագ թեստ			
								Ամսա-թիվ	Արդյունք	Ամսաթիվ	Արդյունք	Ամսաթիվ	Արդյունք	Ամսաթիվ	Արդյունք*		

\* Երկու մասնագետի եզրակացություն

5) Դրական արդյունքով փորձանմուշները ուղեգրվում են ՁԻԱՀ-ի ԿՀԿ «Արյան մեջ ՄԻԱՎ վարակը հաստատելու համար» ուղեգրով (ծևը ներկայացված է ստորև):

**ՈՒՂԵԳԻՐ Ի. \_\_\_\_\_**

**ԱՐՅԱՆ ՄԵՋ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Ազգանուն Անուն Հայրանուն \_\_\_\_\_ Սեռ \_\_\_\_\_

Ծննդյան թիվ \_\_\_\_\_ Կող \_\_\_\_\_ Անձնագիր \_\_\_\_\_

Հասցե \_\_\_\_\_ Նմուշառման ամսաթիվ \_\_\_\_\_

Կլինիկական ախտորոշում \_\_\_\_\_

<b>Իմունաֆերմենտային հետազոտություն</b>	<b>I հետազոտություն</b>	<b>II հետազոտություն</b>
Ամսաթիվը		
Թեստ համակարգը		
Սերիա N		
Օպտիկական խտության (ՕԽ) հսկողությունը		
Օպտիկական խտության (ՕԽ) փորձանմուշը		
Արագ թեստավորում	I հետազոտություն	II հետազոտություն
Ամսաթիվը		
Թեստ համակարգը		
Սերիա N		

Ուղեգրող բուժհիմնարկ \_\_\_\_\_

Հասցե \_\_\_\_\_ Հեռախոս \_\_\_\_\_

*մարզ, բնակավայր, փողոց, շենք*

Լաբորատորիայի վարիչ \_\_\_\_\_

*անուն, ազգանուն*

*ստորագրություն*

Տնօրեն \_\_\_\_\_

*անուն, ազգանուն*

*ստորագրություն*

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ

- 6) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաները իրականացրած հետազոտությունների վերաբերյալ պետք է ներկայացնեն հաշվետվություններ՝ համաձայն «Մարդու իմունային անբավարարության վիրուսի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վիճակագրական հաշվետվության ձև 88-ի:

### **Հապավումներ**

ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ՕԻՍ	օպտիկական խտություն
ՆԼՈՀ	ներլաբորատոր որակի հսկողություն

### **Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ**

1. Ա.Ասատրյան՝ բժիշկ-լաբորանտ, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատոր աստորոշման բաժնի վարիչ
2. Կ.Թեյմուրազյան՝ բժիշկ-լաբորանտ, ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի փոխտնօրեն
3. Հ.Թամրազյան՝ բժիշկ-լաբորանտ, ՁԻԱՀ-ի ԿՀԿ

### **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

## **Շնորհակալական խոսք**

1. Ա.Պապոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ
2. Վ.Արզաքանյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
3. Է.Հովհաննիսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ

## **Գրականության ցանկ՝**

1. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման կլինիկական ուղեցույց, ՀՀ ԱՆ 04.08.17թ. N 2412-Ա հրաման:
2. Draft template for developing national documents on HIV Testing Services, WHO, 2016.
3. Consolidated guidelines on HIV testing services. World Health Organization; 2015.

**ՀՂԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Սույն ընթացակարգի նպատակն է արդյունավետ դարձնել նախաձննդյան խնամք տրամադրող կազմակերպությունների բուժախատողների աշխատանքը հղիներին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն տրամադրելիս: Նախաձննդյան խնամք տրամադրող կազմակերպություններում հղի կնոջը ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն տրամադրելիս մանկաբարձ-գինեկոլոգը պետք է հետևի գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերին:

1. Կոնսուլտացիա կատարած առաջին այցի ժամանակ հղի կանանց տրամադրել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն համաձայն «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման» կլինիկական ուղեցույցի: Խորհրդատվության անցկացման ամսաթիվը նշել «Հղի և ծննդկանի անհատական քարտում», ստանալ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու մասին հղիի գրավոր համաձայնությունը (ստորագրություն):
2. Հղիին ուղեգրել արյան նմուշառման՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար, ուղեգրի մեջ լրացնելով հղիի անձնագրային տվյալները, հղիության ժամկետը, 1-ին թե 2-րդ անգամ է հետազոտվում:
3. Հետազոտության արդյունքի մասին հղիին տեղեկացնել հեռախոսով կամ հաջորդ այցի ժամանակ, անհրաժեշտության դեպքում արտապլանային հրավիրել և տեղեկացնել հետազոտության արդյունքի մասին, կազմակերպել նոր արյան նմուշառում, կամ ուղեգրել ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ կատարվող քայլերը համաձայնեցնելով ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետի հետ:

4. Հղիին ՄԻԱՎ-ի վերաբերյալ կրկնակի հետազոտել 30 շաբաթական ժամկետում, եթե նա պատկանում է ստորև նշված խմբերից մեկին.
  - ԱՎԵԽ-ների ներկայացուցիչ հանդիսացող (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք, քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ, միգրանտներ) հղիներ,
  - ԱՎԵԽ-ներին պատկանող զուգընկերներ ունեցող հղիներ,
  - ՄԻԱՎ վարակ ախտորոշումով զուգընկերներ ունեցող հղիներ:
5. Հղիին 30 շաբաթականում կրկնակի հետազոտելու պատճառի մասին կատարել գրառում «Հղիի և ծննդկանի անհատական քարտի» նշանակումներ աղյուսակի «Այլ նշանակումների անվանում» սյունյակում:



6. Լրացնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվությունների հաշվառման գրանցամատյանը:

**ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՄԱՆ**

<երթվան N	Ազգանուն, անուն, հայրանուն	Սեռ	Ծննդյան տարեթիվ	Ծածկագիր	Քաղաքացիություն	Բնակության դրամային (հաճոց)	Նախաթեքտային խորհրդատվություն	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն	<եթեքտային խորհրդատվություն	Այլ նշումներ

7. ՁԻԱՎ-ի ԿՀԿ ներկայացնել «Հղիներին, ծննդաբերներին և ծննդկաններին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական կազմակերպություններում հաշվառված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած հղիների վերաբերյալ» տարեկան հաշվետվություն:

### **Հաշվետվություն**

(տարեկան)

**Հղիներին, ծննդաբերներին և ծննդկաններին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական կազմակերպություններում հաշվառված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած հղիների վերաբերյալ**

*բժշկական կազմակերպության անվանումը*

<b>Բժշկական կազմակերպության սպասարկման տարածքում բնակվող հղիների քանակակազմը</b>	<b>Ընդամենը</b>	<b>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցածներ</b>	
		<b>Առաջնային</b>	<b>Կրկնակի</b>
Տարեսկզբին գտնվում են հսկողության տակ			
Վերցվել են կոնսուլտացիայի հսկողության տակ			
Վերցվել են այլ հիմնարկների հսկողության տակ գտնվածների թվաքանակից			
Ծննդկաններ, որոնք չեն գտնվել կանանց կոնսուլտացիայի հսկողության տակ			
<b>Ընդամենը</b>			

Բժշկական

կազմակերպության տնօրեն՝ \_\_\_\_\_

/ազգանուն, անուն/

/ստորագրություն/

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ.

**Կ.Տ.**

## **Փաստաթղթավարություն**

1. Կատարել պատշաճ գրանցումներ կատարված հետազոտությունների վերաբերյալ, ժամանակին ներկայացնել հաշվետվություն:

## **Հապավումներ**

ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ԱՎԵԽ	առավել վտանգի ենթարկվող խմբեր (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք, տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ, քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ, միգրանտներ)

## **Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ**

1. Ա.Պապոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ
2. Ն.Մարդոյան՝ Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի Ամբուլատոր պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն
3. Վ.Արզաքանյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
4. Է.Հովհաննիսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ

## **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

### **Շնորհակալական խոսք**

1. Ռ.Աբրահամյան՝ Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի Մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի վարիչ, ՀՀ ԱՆ գլխավոր մանկաբարձ գինեկոլոգ
2. Ս.Գրիգորյան՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի «ՄԻԱՎ վարակ» դասընթացի գիտական ղեկավար

### **Գրականության ցանկ**

1. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման կլինիկական ուղեցույց, ՀՀ ԱՆ 04.08.17թ. N 2412-Ա հրաման:
2. Կանանց կոնսուլտացիայում կիրառվող առանձին փաստաթղթերի ձևեր, ՀՀ ԱՆ 06.05.14թ. N 16-Ն հրաման:
3. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչ, ՀՀ ԱՆ 28.11.13թ. N 77-Ն հրաման:

4. Consolidated guidelines on HIV testing services. World Health Organization; 2015.
5. Guidance on couples HIV testing and counselling including antiretroviral therapy for treatment and prevention in serodiscordant couples: recommendations for a public health approach. World Health Organization; 2012.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«12» հոկտեմբերի 2017թ.

No 2931 – Ա

«ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ», «ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ», «ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ», «ՀՂԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ» ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 19-րդ հոդվածի «ժ», 19.3-րդ հոդվածի 11-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել.

1. «Բժշկական կազմակերպություններում ՄԻԱՎ վարակի հայտնաբերմանն ուղղված հետազոտության և խորհրդատվության իրականացման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 1-ի,
2. «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար արյան նմուշառման, մշակման, պահպանման և տեղափոխման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 2-ի,

3. «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների իրականացման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 3-ի,
4. «Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության տրամադրման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 4-ի:

Լ.ԱԼԹՈՒՆՅԱՆ